Խմբագրութեան Արարատ ամսագրոյ։

Եթէ ամենայն լրագրաց միակնութիւնական պարագան է, որ հասարակութեանց կամ Ազգի համար որ հրատարակվում են, նոյն հասարակութեանց կամ Ազգայնոց՝ իւրեանց ներկայ կամ ապագայ բարօրութեանց նկատմամբ ունեցած ջանից և զգացմանց թարգման լինիլ, և նոցա կարեաց մշտաբարբառ քարոզ, ուրեմն անշուշտ պէտք է պատուական Արարատայ էջերում ընդունելութեան տալն զանի հետևեալ յօդուածը, որ բացատրում է մեր Ազգքսանդրապոլ քաղաքի Հայ հասարակութեան երախտագիտական զգացմունքը և ճանաչողութիւնը մի այնպիսի վսեմ առարկայի՝ որ խոստանում է իւր ապագայ սերնդոյն բազդաւորութիւն մտաւոր և բարոյական զարգացմանց վերաբերութեամբ։

Հաճոյ յայտնի է ամենեցուն՝ որ ինչպէս իւրաքանչիւր ազգասիրաց բարերար կամ երախտաւոր ե՛րբ արժանի կ՚հանդիսանայ և կամ մեծայոյս կ՚լինի իւր երախտեաց պատուղն վայելելու, անշուշտ կ՚զգայ իւր սրտի մէջ մի հոգեկան բերկրանք և քաղցրութիւն, նոյնպէս միևնոյն բերկրաւէտ և քաղցը զգացմունքով լցվում են և այն անձանց սրտերը՝ ե՛րբ կամ իրողապէս և կամ անակնկալ յուսով արժանանալով՝ այնպիսի հաղորդիւ բարերարաց անմոռ և ամենաթանկագին երախտիքներն վայելելու, որպիսի և իցէ կերպիւ իւրեանց երախտագիտական սեպուհ պարտքն վճարելու բաղդին ժառանգորդ կ՚լինին, որով և օրինակ բարեաց կ՚հանդիսանան ուրիշ երախտապարտեաց։ Այնպիսի ուրախութեամբ լցուելու արժանացան այն տարեմտի առաջին օրը քաղաքիս Հայազգի ժողովրդեան սրտերն։ Լրագիր ընթերցող ազգայնոց լաւապէս յայտնի է՝ առ Տէր հանգուցեալ արժանայիշատակ Իշխան Պ. Ահրամեան երկայնաբազուկ Արղութեանցի ազգօգուտ կտակը, որով բարեպաշտ և ազգասէր լուսահոգի հանգուցեալը ըստ մեծի մասին իւր առատանուէր արդեամբ քաղաքիս մէջ ձեռնարկեալ Եկեղեցւոյ շինութեան թերին լրացուցանելոյ նպատակաւ 2200 մանէթ որոշելոյ զկնի, որոշել է 40,000 մանէթ նոյն Եկեղեցւոյ մօտ Հայազգի ազգաստիկ օրիորդաց Ուսումնարան բանալու համար, որովհետև այդ Աստուածահաճոյ կտակի բովանդակութիւնը, և դոյն առթիւ մի քանի անգամ կարևոր տեղեկութիւնք հաղորդուածեն «Արարատ Հայաստանի» լրագրի միջոցաւ, Ընթերցասէր ազգայնոց նոյնպէս և սրատեսիլ ուրախութեան և երախտագիտութեան խորին զգացմունքներն բացատրուածեն 'ի լուր ընդհանուր ազգի երկու յօդուածով, որոց մինը հրատարակուած է «Հայկական աշխարհի» անցեալ 1869 տարի երկրորդ համարի մէջ և միւսը պատուական Արարատայ առաջին թերթում նոյն տարի։

Այո՛ 1869 թուականի առաջին օրը բաղդաւորուեցաւ քաղաքիս Հայ հասարակութիւնը նոր տարւոյ հետ ուրախութեամբ սրտի շնորհաւորել և աւետել միմեանց մի այնպիսի նախախնամական անակնկալ յաջողութիւն, որ խոստանում էր նոր կեանք բաղդաւորութեան իւր գեղեցիկ սեռի մտաւորապէս և բարոյապէս կրթուելու և արժանաւոր մայրեր պատրաստուելու նկատմամբ, ուստի և պարտք համարեց իւրեան միևնոյն օրը համախումբ հոգևորական դասուք կատարել հոգեհանդիսա և պատուել այն հաղորդիւ բարերար անձի անմոռանալի յիշատակը, որ այդ ամենացանկալի և

մեծաօգուտ յաջողութեան երկրաւոր պատճառ էր հանդիսացել։

Այս տարի ևս տարեմտի առաջին օրը այդ երախտագիտական սուրբ պարտականութիւնն գործադրել փնտրեց տեղւոյս Այոց երկու Եկեղեցեաց մէջ ևս փառաւորապէս հոգեհանգիստ կատարել տալով, ինչպէս որ ուխտել էր ամ ըստ ամէ կատարելու այդ հոգևոր հանդէսը՝ մեծ ուրախութիւն և նոր տարեգլուխ համարելով իւր ապագայ սերնդոց դատարարութեանը և յառաջադիմութեանը՝ գիտութեան և բարոյականութեան ասպարէզի մէջ, որ միակ ազբիւր է թէ մարմնապէս բարեկեցութեան և թէ հոգեպէս երջանկութեան։

Յանկալի էր, որ առաքինաշարժ հանգուցելոյ Աստուածասէր և բարեպաշտ իշխանուհի ամուսնին և միւս գերապատիւ ազգասէր կտակակատարները կրկնապատկէին իւրեանց զովելի աշխատութիւնը օր առաջ՝ ի կատար հասուցանելու թէ իւրեանց ամենասիրելի երջանկայիշատակ Պատկարարի ազգօգուտ նպատակը, և թէ տեղւոյս Ազգայնոց ջերմագին սուրբ փափագը, որոյ մասին թէև ընդհանուր հասարակութեանց ընտրեալ անձանց համագումար ժողովով և նոցա համահաճութեամբ ընտրուեցան երկու արժանաւոր անձինք՝ մին Պղերականաց կարգից արժանապատիւ Տէր Յովսէփ Եպիսկոպոս Վարդանեանց՝ Ընդամենոց Հոգևոր Կառավարութեան Այոց Ազգքսանդրապօլու, և միւսն պատուելի քաղաքացեաց կարգից Յարգոյապատիւ Պարոն Աղասպոպ Խօջայեանց՝ ներկայ տարւոյս քաղաքական պատգամաւորաց մին, որ բոլոր հասարակութեան կողմից որպէս պատգամաւոր երթան Տփխիս և հասարակական երախտագիտութեան դրդմունքը, որոց որ արժանն է, անձամբ անձին լեռլի յայտնելուց զկնի՝ կարևոր հոգացողութիւններն անեն յիշատակեալ բարեպատճառ կտակի ըստ ուղիղ նպատակին անյապաղ կատարման մասին. սակայն առ ժամն այդ որոշմանը կատարումը անյարմար համարելով ուղարկուեցաւ հաւատարմութեամբ հասարակութեան կողմից՝ մեր քաղաքացի երկու առաջաւոր անձանց վերայ, որք գեռ ևս գտնվում են Տփխիս, այնէ Պ. Պետրոսի Զիթողեանց և Պ. Գրիգորի Ռափայէլեանց, որպէս զի մինչև ընտրեալ պատգամաւորաց գնալն՝ զոքա 'ի կողմանէ հասարակութեան աշխատին և որոնցից որ արժան է՝ պատշաճաւոր կերպիւ խնդրեն կտակի ճշգիւ և անյապաղ կատարումն փութացուցանելու մասին։ Բարեբաղդաբար ինչպէս որ լսվում է, այդ պարոնները ստացել են Եկեղեցւոյ թերութիւնը լրացնելու մասին կտակած 2200 մանէթն, որպիսի ուրախութիւն լուրն ստանալով և մեր հասարակութիւնը ինչպէս որ մինչև ցարդ վստահանալով կտակակատարների ազդասիրութեան վերայ՝ մեծայոյս էր վաղ թէ անագան իւր համար որոշուած և պատրաստուած հոգեկան բարիքն փայելելու, նոյնպէս և այժմ աւելի ևս հաստատուեցաւ իւր յուսոյ մէջ, և մինչև անգամ առանց ընտրեալ պատգամաւորներն ուղարկելու ևս անհերկրայ է թէ որպէս անմահանուն Հանգուցելոյ Ազնուատոհմ և բարեհամբաւ կտակակատարներն ինչպէս յարգող և պրոթեամբ կատարող նորա բարենպատակ աւանդը՝ Նորանից Աստուածանենութեան տաճարի թերութիւնն լրացնելու մասին կտակածն 'ի կատար հասուցին, նմանապէս և նոյն Ամենարարոյ համար բանաւոր տաճարներ արժանապէս պատրաստելու մասին կտակածն ևս անշուշտ 'ի կատար

ածելու են ոչ անազան. որպիսի անխաբելի յուսով մեր հասարակութեան հետ ես և սպասում եմ սոյն ազգաօգուտ առարկայի իրագործուելուն աւետիքն հաղորդելու 'ի լուր ընդհանրութեան սիրելի Ազգայնոցս առ 'ի յուսախութիւն և 'ի մխիթարութիւն նոցա։

Մնացեալ վարժապետ Արաքելեանց։
է 4-ն յունվարի 1870 թ.
Աղէքսանդրապոլ։

(Սոյն այս գրութիւնը հրատարակուելէն զկնի՝ խմբագրութիւնս ևս սրբազան պարտք կը համարի յատկապէս խնդրել արժանայիշատակ հանգուցեալ ազնիւ կտակատարելոյն, որպէս զի ազգասիրաբար բարեհաճին Աղէքսանդրապոլոյ մէջ կառուցանելիք Ազգ. օրիորդաց դպրոցին շինութեան և կառավարութեան յատկացած քառասուն հազար բուբլին հանգուցեալ անմահ-բարեբար Արղութեանց Իշխանին կտակն և սրբազան ըղձին համաձայն ճշգութեամբ և փութով հասուցանելոյ՝ որոց արժանն է, ինչպէս հատուցած են ս. եկեղեցւոյ շինութեան 'ի նպաստ կտակեալ 2200 բուբլին)։

Խմբագրութեան։

Ցաւօք սրտի կը ծանուցանեմ, որ սոյն ամսոյս 9-էն առաւոտեայ ժամ 11-ին կնքեց իւր մահկանացուն Գերազնիւ Տիգրանեանց Յովհաննէս Ազայի մայր բարեպաշտուհի մահտեսի Մարիամ Տիկինն ի հասակի 84 ամաց։ Նոյն օրը յերեկոյեան ժամերգութեան միջոցը տարուեցաւ յեկեղեցին բաւական շքեղ հանդիսիւ. իսկ հետեւեալ օրը կատարուեցաւ զկնի Սրբոյ պատարագին, նորա յուզարկաւորութեան արքեպիսկոպոսն ամենապատուաւոր կերպիւ, որին աւելի շքեղացնում էր նորա Դստրերի մօտ շրջապատեալ իւր Գերազնիւ միակ որդւոյ անքուն հսկողութեան եւ պաշտպանութեան ներքոյ եղած եւ իւր իսկ անձնուրումը ի հինգ ամաց հետէ դտնուած Արաքաչեան եղբարց Անտոնին Ուսումնարանի աշակերտների բազմութիւնը, որոնց նա ինքն առ Տէր հանգուցեալ Տիկինը, չէր ծանծրանար գոգցես յուրաքանչիւր օր հրաւիրել եւ յորդորել դէպ ի ցանկալի Ուսումը, խրախուսելով նորանց, դէպ ի նոյն տպիտանարատ առարկայն փութացնող ձեռնահաս միջոցներով եւ կոչելով նրանց իւրեան զաւակներ եւ սաներ. որոնք եւ ի նշան երախտագիտութեան որպէս բարեպաշտուհի հանգուցեալոյն, նոյնպէս եւ իւրեանց վրայ խնամարկ Գերազնիւ Տիգրանեանցի, զոյգընթաց կարգաւ ուղեւորեցին նորա փառաւոր դագաղը մինչեւ ցՀԷՌ ասուած գերեզմանոցը, ուր թաղուած են սոյն Տիգրանեանց ազնիւ շառաւիղից ի Քրիստոս փոխուած ննջեցեալոց ոսկերտիքը. ուրանօր եւ թաղման կարգը կատարելու միջոցը վերոգրեալ Ուսումնարանի նախապատրաստական դասատու Ուսուցիչ Սարգիս Արաքաչեանցն կարդաց մի սրտառուչ դամբանական ի դիմաց բոլոր աշակերտաց, որոյ մէջ Ազնուհի Տիկնոջ դէպ ի յեկեղեցին եւ յաղբատաց ցուցած ձեռնտուութիւնները յիշելով, կը հրաւիրէր ծերունազարդ հանգուցեալոյն օրհնել իւր սաները յերկնաւոր. օրհնել, որպէս զի նորա շնորհիւ իւր Գերազնիւ որդւոյն ամին ի շնորհս եւ զարգանան ի բարի գիտութիւնս յօգուտ ազգի եւ յիշատակ իւր բարեպաշտական հոգւոյն։ Ճառը եւ թաղումը աւարտելուց յետոյ բացուեցաւ հասարակաց մի բազմախոտոտիկ սեղան, յորոց վայելելով ամէն մի ազքատ եւ հարուստ ըստ իւրաքանչիւր չափու, կը բարեմախթէին Արքայութիւն հանգուցեալոյ հոգւոյն, եւ արեւշատութիւն իւր միակ Ազգապիտոյ Գերազնիւ որդւոյն. որոնց հետ եւ ես միշտ բարեմախթելով նոյնը, մնամ Ազգապարծան Խմբագրութեանդ յառաջընթացութիւնը ցանկացող

Աղէքսանդր Արաքաչեանց
է 15-ն դեկտ. 1869 թ.
Աղէքսանդրապոլ։

(Սոյն այս նամակագիր Պարոնը՝ կը հաղորդէ մեզ նաեւ, թէ՝ անցեալ դեկտ. ամսոյ 14 երեկոյին՝ 10-երրորդ ժամը 25 րոպէ անցած՝ երկրաշարժ պատահած է Աղէքսանդրապոլոյ մէջ հետզհետէ, մի քանի անգամ կրկնելով՝ իւրաքանչիւր անգամին գրեթէ ¼ ժամ միջոց տալով, բայց մի քանզմիւսն թոյլ և թեթեւ, միայն առաջինը սաստիկ ցնցած է մինչեւ 1½ րոպէ տեւողութեամբ։ Այս ամենայնիւ գոհութիւն Աստուծոյ, առանց վնասուց անհետացած է այժմ երկրաշարժը։ Այս աւթիւ նամակագիրը հետեւեալը բնագիտաց գնեութեան կը յանձնէ։

«Բայց այդու ամենայնիւ այդպիսի երկ-